ՀԻՆ ՀԱԻՈՑՔ ՀԱՅՈՑ, 1895, ՎԵՆԵՏԻԿ

Հ. Ղևոնդ վարդապետի Ալիշան։

Ցերևս 50.- « . . . Այս յատուկ հրապաշտութեան կենդրոնէն շատ հեռու մեծ կենդրոնում այլ կար կրակի պաշտամունք. և կայ, և ամենուն ծանօթ է մանաւանդ այս ետքի տարիներս. —Բագուի նաւթի հորերն ու հուրերն. - որ երբեմն իբրեւ առանձին գաւառ մի Փայտակարան աշխարհի՝ Հայոց տէրութեան մասն եղած էր, և կոչւում էր Եօթն—Փորակեան բագինք. հաւանօրէն եօթն գլխաւոր փորուած տեղ և բագին նաւթ վառելու և պաշտելու, որոց մէկն յատուկ Վռամական հուր կոչւէր. Ազէր Պէհրամ ըստ Պարսից, որք նոյն թուով՝ ուրիշ կողմեր այլ կրակի Ատրուշաններ ունէին. իսկ ի բնիկ Արարատեան աշխարհի մէջ, ի Բագրեւանդ գաւառի, ուր Հայոց գլխաւոր պաշտամանց մէկ տեղն էր, ի Բագաւան և Հռովմայ Ամենագից (Պանթէօն) տաճարի պէս այլ և այլ կրօնից պաշտելիք, տաճարք և բագինք կային, մէկ բագինն այլ էր Կրակի. երբ յետ սպանման Խոսրովու՝ հօր Տրդատայ կրակպաշտութեան նորոգողն և աճեցնողն ի Պարտա՝ Արտաշիր Սասանեան՝ քանի մի տարի տիրեց և, Հայոց թագաւոր կարծեց զինքն, որ այս տեղ գտաւ զայն և հրամայեաց մշտավառ պահել զՀուրն Որմզդական՝ որ ի վերայ Բագնին որ ի Բագաւան.» (Խորէն. Բ. Հե). Հաւանօրէն ուրիշ ատրուշաններ այլ վառել տուաւ այս ու այն կողմ. բայց քիչ տարի վերջ Տրդատ և Ս. Գրիգոր, միւս սնոտի պաշտամանց հետ կրակարաններն այլ ջնջեցին»։

Ընթերցողաց տեղեկութեան համար կարեւոր համարեցի դնել այս տեղ И. Березина *ճանապարհորդի զրուածը Բագուի համար, որ քաղել ենք նորա «ճանապարհորդութիւն Դաղստանում և Անդրկովկասում». Երկրորդ լրացրած հրատարակութիւնից, տպած Ղազան քաղաքում.* 1850 *թվին։*